Անտի ապա, ասպետք Լեհաց պար առեալ
Ըզքև. երէցք 'ի Դըլուժքա ներբողեալ՝
Փառօք մեծաւ ածին ըզկոյսդ յայս քաղաք.
Ուր և իսկոյն եղեն յայտնի Քոյին հրաշք.
Առատ անձրև՝ երաշտացեալն 'ի յերկիր
Ցօղեալ՝ արար բազմապտուղ կենսակիր։
Ծանեաւ երէցն ըզքանչելիսըդ յայտնի.
Որ կայր յերկար, լոյծ անդամօք 'ի մահճի։
Պատգամ 'ի Քէն եղև Նըմա 'ի տեսլեան
Դիմել առ Քեզ յեկեղեցւոջս հայկական,
Ուր և թողեալ զմահիճ, ոտիւք զընայուն
Վազվազելով ըզկոյսդ օրհնեալ դարձ 'ի տուն։
Բազում են կաղք, կոյրք, գօսացեալք, հաշմանդամք.
Որոց գըտեալ ըզլոյս երկնից և զգընացք,
Թողեալ աստէն ցուպ գաւազան ընդ անթով
Վերադարձան՝ օրհնեալ ըզՔո մեծագով։
Սըրածութեան ժամուն՝ տեսին լուսաւոր
Ըզքոյ տաճար շուրջ բընակիչք մերձաւոր.
Գիտեմք բիւրիցըս մեք գրտակ հաւաստեաւ
Զըզքանչելիսդ ակն յանդիման աստ անբաւ.
Դու մըխիթար՝ որոց 'ի վիշտ տագնապին,
Ապաւէն դու մեղաւորաց գըրոհին.
Դու գանձ անգին մեր Կամենից քաղաքի,
Հըզօր պաշտպան Փոտոլիացւոց գաւառի։
Կաս 'ի տախտակ, անաղարտ գոյն Քոց դիմաց,
Երկնաւորի, այո՛, մատանց ես կերտուած։
Լեր մեզ պաշտպան, դու մայր ամրիծ, կոյս զըթած.
Արա՛ ընդ մեզ ըստ սրբագոյն Քոց կամաց։
Յաւերժաբար երկրպագուք եմք Քոյին,
Անտես արաՀըզպարտիս մեր, թողութիւն
Մեղաց մերոց հայցեա՛. խընդրեմք, Տիրամայր,
Եւ յետ մահուան լեր մեր հոգւոց կենարար։